

**ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ–ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ  
ՈՐՊԵՍ ՆԵՐԻՄԱՍՏԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ  
ՈՃԱԿԱՆ ՀՆԱՐԱՆՔՆԵՐ  
Քննությունն նոր լույսի ներքո\***

**Բանալի բառեր** – ներակա իմաստ, համագործակցության սկզբունք, ոճական հնարանք, պատկերավորման–արտահայտչական միջոցներ, հեզնանք, փոխաբերություն, համեմատություն, փոխանունություն, համըմբռնում, շրջասույթ, մեղմասություն, դարձվածք, ներակա–գնահատողական ասույթներ:

Պատկերավորման–արտահայտչական միջոցները խոսքն ազդեցիկ, տպավորիչ, պատկերավոր դարձնող, հարստացնող ոճական հնարանքներ են: Լեզվաբանության մեջ դրանք մեծ մասամբ քննվել են հենց այդ տեսանկյունից: Սակայն դրանք ունեն մի յուրօրինակ գործառույթ ևս, այն է՝ կարող են ծառայել ոչ բացահայտ, թաքնված, այսինքն՝ ներակա իմաստների արտահայտմանը:

Պատկերավորման միջոցների դերը ներակայման տեսության մեջ պայմանավորված է նրանով, որ պատկերը ոչ միայն արտահայտչականության, հուզականության ուժեղացման և գեղագիտական տպավորության ստեղծման միջոց է, այլև ընթերցողի ստեղծագործական ինտեսիվացման գործոն և տեղեկության սեղմման միջոց<sup>1</sup>: Այս տեսանկյունից ներակայումը մեծ մասնակցություն և բազմազան դրսևորումներ ունի առօրյա–խոսակցական, լրագրային–հրապարակախոսական ոճերում և հատկապես գեղարվեստական ոճում, որը, ունենալով գեղագիտական գործառույթ, ի տարբերություն մյուս ոճերի, աչքի է ընկնում պատկերավորման միջոցների առատությամբ: Ինչ վերաբերում է գիտական և պաշտոնական ոճե-

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.11.2022:  
1 Տե՛ս **Арнольд И. В.**, Импликация как прием построения текста и предмет филологического изучения, «Вопросы языкознания», М., Изд-во академии наук СССР, 1982, N 4, էջ 83:

վէ՛մ համահայկական հանդես, ԺԴ (Ի) տարի, թիվ 4 (80), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2022

րին, ապա դրանցում նման ներակայող միջոցների գործածությունը խիստ սահմանափակ է՝ թելադրված դրանց բնութագրական գլխավոր գծերով՝ ճշգրտությամբ, հստակությամբ և այլն:

Պատկերավորման–արտահայտչական միջոցները հաղորդակցական ներակայման դրսևորման ոճական հնարանքներ են: Բրիտանացի լեզվաբան, փիլիսոփա, ինպլիկատուրաների տեսության հիմնադիր Հ. Գրայսն առանձնացնում էր ներակայման երկու տեսակ՝ **պայմանական**, որը հատուկ է տվյալ կառույցին՝ անկախ համատեքստից, և **ոչ պայմանական՝ հաղորդակցական**, երբ ներակա իմաստը դրսևորվում է որոշակի համատեքստում, հաղորդակցական ակտի որոշակի պայմաններում<sup>2</sup>: Հաղորդակցական ներակայումը սերտորեն կապված է հաղորդակցության ընդհանուր սկզբունքի և ավելի կոնկրետ կարգախոսների հետ: Քանի որ հաղորդակցական ակտը ենթադրում է մասնակիցների համատեղ գործունեություն, որոնք ունեն մեկ ընդհանուր նպատակ, Գրայսը սահմանում է հաղորդակցության ընդհանուր սկզբունք՝ **համագործակցության սկզբունքը**, որը պետք է պահպանեն մասնակիցները. «Քո հաղորդակցական ներդրումը երկխոսության տվյալ քայլում պետք է լինի այնպիսին, որպիսին պահանջում է տվյալ երկխոսության համար փոխադարձաբար ընդունված նպատակը (ուղղությունը)»<sup>3</sup>: Կարգախոսներն էլ, է. Կանտի հետևողությամբ, բաժանում է չորս խմբի՝ քանակի, որակի, հարաբերության և ձևի: Քանակի կարգախոսով որոշվում է հաղորդվող տեղեկատվության չափը, մասնավորապես.

1. Քո ասույթը չպետք է պարունակի ավելի քիչ տեղեկատվություն, քան պահանջվում է:

2. Քո ասույթը չպետք է պարունակի ավելի շատ տեղեկատվություն, քան պահանջվում է:

Որակի կարգախոսի համաձայն՝ պետք է ձգտել, որ ասույթը լինի ճշմարիտ: Այն ներառում է երկու ավելի կոնկրետ կարգախոսներ.

---

2 St' u Grice H. P., Logic and conversation, In: "Syntax and semantics", vol. 3, ed. by P. Cole and J. L. Morgan, N. Y., Academic Press, 1975, էջ 45, Грайс Г. П., Логика и речевое общение, «Новое в зарубежной лингвистике», Вып. 16. Лингвистическая прагматика. Сборник: Пер. с разн. яз. / Сост. и вступ. ст. Н. Д. Арутюновой и Е. В. Падучевой. Общ. ред. Е. В. Падучевой, М., «Прогресс», 1985, էջ 221:

3 Grice H. P., op. cit., p. 45.



րաինայում հոսանքի, ջեռուցման ու ջրամատակարարման անջատումները), «...և դա արդեն նոր իրավիճակ է, չնայած ձգնաժամային և ողբերգական իրադրությունների հաղթահարմանն ու «անաղմուկ» ընտրությունների անցկացմանը» («Ժողովուրդ», Եր., 2017, N 62 (1444), էջ 2), «Թալանի՛ր 2 միլիոն, տուգանվի՛ր 150 հազար դրամով. վատ բիզնես չէ» (նույն տեղում): Հատկանշական է, որ նմանօրինակ դեպքերում տվյալ բառի կամ արտահայտության միջոցով ներակայորեն արտահայտվում է ոչ միայն բոլորովին այլ՝ հակառակ իմաստ, այլև խոսողի կամ հեղինակի բացասական վերաբերմունքը: Վերջին օրինակում գնահատողական վերաբերմունքը ներակայորեն արտահայտվում է նաև ներկայացվող միավորների խիստ անհամատեղելիությամբ (ինչպե՞ս կարող է մարդը 2 միլիոն թալանելու համար տուգանվել ընդամենը 150 հազար դրամ): Այսինքն՝ այստեղ կարելի է առանձնացնել երկու կարգի ներակայում՝ բառի կամ արտահայտության նշանակության և խոսողի վերաբերմունքի՝ նկատի ունենալով, որ «ներակայորեն կարող է հաղորդվել ցանկացած տիպի տեղեկություն՝ և՛ առարկայական–տրամաբանական, և՛ հուզական–գնահատողական»<sup>6</sup>: Այս առումով ռուս լեզվաբան Ե. Բորիսովան ընդգծում է, որ հուզական, արտահայտչական և գնահատողական տարրերը, որոնք ընդհանրական անվանումով կոչվում են հարանշանակություններ, մտնում են բառի նշանակության մեջ, և նման տեղեկությունները համարվում են ներակա՝ հիմք ընդունելով այն, որ դրանք բացահայտվում են լսողի լրացուցիչ ջանքերի շնորհիվ, այսինքն՝ լսողն օգտագործում է իր իմացածը հնչերանգի, շարահյուսության, խոսքային իրադրության մասին, որպեսզի պարզի, վերհանի խոսողի իրական մտադրությունը<sup>7</sup>:

Ուշադրություն դարձնենք ևս մի հանգամանքի: Գրավոր խոսքում հեզնանք արտահայտող բառը կամ արտահայտությունը սովորաբար առնվում է չակերտների մեջ: Չակերտներն ունեն կիրառության տարբեր դեպքեր: Անդրադառնալով չակերտների իմաստաբանությանը՝ ռուս լեզվաբան Ա. Զալիզնյակը, ի թիվս դրանց այլ գործառնությունների, նշում է, որ դրանք հանդես են գալիս նաև որպես

6 **Гергиев О.**, Имплицитно-оценочный высказывания в публичной речи, «Вестник Волгу». Серия А: Языкознание, Волгоград, 2017, с. 136.

7 **Stu** «Имплицитность в языке и речи», Отв. ред. **Е. Г. Борисова, Ю. С. Мартемянов, М.**, «Языки русской культуры», 1999, էջ 34:

գնահատականի արտահայտման ցուցիչ<sup>8</sup>: Տվյալ դեպքում չակերտները գործածվում են՝ ընդգծելու, որ բառը կամ արտահայտությունը կիրառվել է ոչ ուղղակի նշանակությամբ՝ այդպիսով արտահայտելով նաև խոսողի վերաբերմունքը: Նշանակում է՝ չակերտները ևս մասնակցում են ներիմաստի արտահայտմանը, ունեն իրենց ուրույն դերը դրանում:

Ներակա իմաստ պարունակող տիպիկ միջոց է **փոխաբերությունը**: Ինչպես նշում է ռուս լեզվաբան Ե. Երմակովան, «Փոխաբերությունը, ինչպես ոչ մի այլ լեզվական երևույթ, արտացոլում է արտակա և ներակա գիտելիքների միջև կապերի անխզելիությունը բառի զուգորդական դաշտերի կառուցվածքում, որում նշանակության միջուկը շրջապատող իմաստաբանական հատկանիշների շրջագիծը ներկայացնում է ներունակորեն հասկանալի կապերի ու հարաբերությունների սարդոստայն»<sup>9</sup>: Փոխաբերության սահմանումն արդեն իսկ հաստատում է դա. «Փոխաբերությունը մի բառի (բառակապակցության) գործածությունն է մեկ այլ բառի իմաստով և նրա փոխարեն՝ հիմնված դրանց արտահայտած առարկաների (հատկանիշների, գործողությունների) նմանության կամ համեմատելի լինելու վրա»<sup>10</sup>: Այսինքն՝ գործածված բառը թաքցնում է մեկ այլ իմաստ, ասում ենք մի բան, բայց նկատի ունենք մեկ այլ բան, և, ինչպես իրավացիորեն նշում է Վ. Բաղդասարյանը, ««բառի փոխաբերական կիրառություն» կամ «բառի կիրառումը փոխաբերական նշանակությամբ» արտահայտությունն արդեն իսկ ցույց է տալիս, որ այդպիսի նշանակությունը տվյալ բառի սեփական նշանակությունը չէ, այլ «փոխանցվում է» նրան տվյալ համատեքստում»<sup>11</sup>: Օրինակ՝ «**Կրակների** միջով պիտի անցնենք,– շարունակեց Մամիկոնեից տիկինը, որ նա կարողանա ուշքի բերել ինքն իրեն: Զինվորյալ ենք՝ զինվորյալի վարք սկսենք» (Դ. Դեմիրճյան, նշվ. աշխ., էջ 523), «Իսկ դրա հետևում էլ նկատում էին մեր հակառակորդ Ադրբեջանի **ականջները**» («Հրապարակ», 2017, N 68 (2119), էջ 5), «Թուրքիան, մասնավոր

8 Sten Zaliznyak A. A., Семантика кавычек, «Труды Международного семинара Диалог’2007 по компьютерной лингвистике и ее приложениям», М., 2007, [http://www.philology.ru/linguistics2/zaliznyak\\_anna-07.htm](http://www.philology.ru/linguistics2/zaliznyak_anna-07.htm) (մուտք 17.09.2022):

9 Ермакова Е., Имплицитность в художественном тексте (на материале русскоязычной и англоязычной прозы психологического фантастического реализма), Саратов, Изд-во Саратов. Ун-та, 2010, с. 38.

10 Ավետիսյան Յու., Սարգսյան Ա. և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., ԵՊՀ հրատ., 2016, էջ 276:

11 Багдасарян В. X., Проблема имплицитного, Ер., Изд-во АН АрмССР, 1938, с. 25-26.

րապես, երկար **շոշափուկներ** ունի, որոնք հասնում են տարածաշրջան» («Ազգ», Եր., 2022, N 36 (5724), էջ 7) և այլն, որոնցից առաջինում **կրակներ** բառը փոխաբերաբար գործածվել է «**ծանր փորձություններ, դժվարություններ**» նշանակությամբ, երկրորդում **ականջները** բառը՝ «**լրտեսներ**» նշանակությամբ, երրորդում **շոշափուկները**՝ «**գործակալություններ, որոնց միջոցով վարվում են գործերը, ծավալվում գործունեություն**» նշանակությամբ: Կամ՝ Մխիթարը մելիք Բարխուդարի մասին ասում է. «– Մոռոթին դուր չեկավ այսօրվա մեր արածը, **օձ է**» (Ս. Խանգադյան, նշվ. աշխ., էջ 60). **օձ**՝ գործածված է ոչ թե իր ուղղակի նշանակությամբ, այլ փոխաբերական՝ արտահայտելով այդ կենդանուն բնորոշ հատկանիշները՝ չարությունը, նենգությունը, հետևաբար այն տվյալ դեպքում ներակայում է «**չար, նենգ**» իմաստները, և միևնույն ժամանակ դրանով արտահայտվում է նաև Մխիթարի բացասական վերաբերմունքը մելիք Բարխուդարի նկատմամբ: Ընդհանրապես կենդանիների անվանումների փոխաբերական կիրառություններում ներակայորեն արտահայտվում են նրանց բնորոշ հատկանիշները և միաժամանակ հեղինակի գնահատողական վերաբերմունքը: Այս երևույթը հատկապես տարածված է խոսակցական լեզվում, օրինակ՝ խորամանկ մարդուն ասում են՝ «աղվես է», թափթփված մարդուն՝ «խոզ է» և այլն: Նման դեպքերում ներիմաստը սերտորեն կապված է բառի **իմպլիկացիոնալի** (импликационал) հետ, որը հիմք է դառնում փոխաբերական կիրառության համար: Բառի իմպլիկացիոնալը նրա նշանակության ցուցիչներն են, որոնք անհրաժեշտաբար կամ հավանաբար ենթադրվում են նրա հիմնական իմաստային կազմով և արտակայորեն անվանվում են համատեքստում: Առանձնացվում են ուժեղ և թույլ իմպլիկացիոնալներ: Առաջինի մեջ մտնում են այն ցուցիչները, որոնք կազմում են բառի նշանակության անբաժան մասը, բայց չեն մտնում նրա հիմնական իմաստային կազմի մեջ, իսկ երկրորդի մեջ՝ այն ցուցիչները, որոնց առկայությունը կամ բացակայությունը հավասարապես հավանական է և հավասարապես խնդրահարույց<sup>12</sup>: Այսպես՝ **կրակ** բառի ուժեղ իմպլիկացիոնալում կներառվեն «բոց, ջերմություն» և այլ ցուցիչներ, իսկ թույլում՝ «փոր-

12 Տե՛ս **Умерова М. В.**, Импликация в семантической структуре текста, <https://studylib.ru/doc/286807/implikaciya-v-semanticheskoy-strukture-teksta> (մուտք՝ 15.10.2022), էջ 10:

ծություն, դժվարություն» և այլն, ինչն էլ հիմք է ծառայել վերոնշյալ օրինակում ներիմաստի արտահայտման համար:

Ներիմաստն ավելի լայն ընդգրկում ունի ծավալուն փոխաբերություններում, որոնք հնարավորություն են տալիս նաև որոշակիորեն քողարկելու ասելիքը, օրինակ՝ «Գուցե խաղաղությամբ հանգեցնենք մեր տան ներսում ծագած կրակը» (Ս. Խանգաղյան, նշվ. աշխ., էջ 73), ասել է թե՛ «Գուցե խաղաղությամբ վերջ դնենք ներքին ապստամբությանը», այսինքն՝ «մեր տան ներսում ծագած կրակը» արտահայտությամբ Տեր Ավետիսն անուղղակիորեն նկատի ուներ երկրում ծագած ներքին ապստամբությունը:

Փոխաբերական, այլաբանական իմաստ է արտահայտվում **դարձվածքների** միջոցով, որոնց բաղադրիչները վերահիմաստավորվում են և ձեռք բերում նոր իմաստ: Այսինքն՝ արտաքին ձևավորումը մի պայմանական կառույց է, որի տակ թաքնված է բոլորովին այլ նշանակություն, օրինակ՝ «Օրերն անցնում են, «**սայլը տեղից չի շարժվում**» (= գործում որևէ փոփոխություն չի լինում)» («Հրապարակ», 2022, N 168 (3395), էջ 7), «Արցախյան մեր աղբյուրը փոխանցում է, որ Հարությունյանը չի համաձայնել օժանդակել Բաբայանին՝ նշելով, որ մեկ անգամ արդեն ընկել է վերջինիս թակարդը և բնավ ցանկություն չունի **նույն գետը երկրորդ անգամ մտնել** (= նույն քայլը՝ արարքը նորից անել)» («Փաստ», Եր., 2022, N 100 (1112), էջ 1) և այլն: Ներակա իմաստ պարունակող այս միջոցն առավել լայն դրսևորումներ ունի հրապարակախոսական ոճում, հատկապես ԶԼՄ-ներում: Դա պայմանավորված է նրանով, որ մանուկում դարձվածքներն օգտագործվում են ոչ միայն խոսքի պատկերավորության և միտքն անուղղակիորեն արտահայտելու համար, այլև տարբեր փոփոխությունների ենթարկվելով՝ դառնում են անհատի վերաբերմունքն արտահայտող հզոր միջոց: ԶԼՄ-ներում գնալով լայն տարածում են ստանում բաղադրիչային փոփոխության ենթարկված դարձվածքները, օրինակ՝ «Այս կարծիքի ջատագովները հիմնավորում են, որ ձայնագրությունը *ջրի*, այսինքն՝ **համացանցի երես դուրս է եկել** այն ժամանակ, երբ վերջնականապես պարզվեց, որ Արտակ Սարգսյանը խորհրդատու է գնալու...» («Հրապարակ», 2017, N 68 (2119), էջ 3), «Միննույն ժամանակ, քաղաքագետի խոսքով, Փաշինյանը դեռ հանդիպումից առաջ Twitter-ում **քար էր շարտել**

**Ռուսաստանի դաշտ**՝ հասկացնելով, որ ՌԴ-ն իր ստանձնած պարտականությունները չի կատարում» («Փաստ», N 110 (1122), էջ 2. *մեկի քուսրանը քար նեպեկ*): Հանդիպում է նաև դարձվածքի մասնատումը, ինչպես՝ «Լևոն Տեր-Պետրոսյանի **խաղաղությունից** մնացել են միայն **աղավնիները**» («Ժողովուրդ», N 62 (1444), էջ 5): Նման կիրառություններով դարձվածքները ոչ միայն թաքցնում են որոշակի իմաստ, այլև ներակայորեն արտահայտում են նաև հեղինակի գնահատողական՝ հեզնական վերաբերմունքը:

Ասույթները, որոնք ներակայորեն փոխանցում են հուզական-գնահատողական տեղեկություն, կոչվում են ներակա-գնահատողական, որոնք ռուս լեզվաբան Օ. Գեորգիևը պայմանականորեն բաժանում է երկու խմբի՝ ա) ասույթներ, որոնք չեն պարունակում բառային միավորներ, բայց արտահայտում են խոսողի դրական կամ բացասական վերաբերմունքը, և բ) ասույթներ, որոնք պարունակում են գնահատողական բառային միավորներ, որոնց իմաստները տրամագծորեն հակադրվում են բառարանային հաստատված իմաստներին<sup>13</sup>: Քննարկված օրինակներում, որոնք ներակայորեն արտահայտում են նաև հեղինակի գնահատականը, ինչպես երևում է, գործ ունենք երկրորդ կարգի ասույթների հետ, քանի որ դրանցում այդ գնահատականն արտահայտվում է տրամագծորեն հակառակ իմաստով ընկալվող բառով (հեզնանք) կամ բաղադրիչների փոփոխությամբ դարձվածքներով:

Ներիմաստ պարունակող յուրօրինակ միջոցներ են փոխաբերության հիմքի վրա կառուցված **թևավոր խոսքերը** և **պատկերավոր ասույթները**, որոնք խոսքը միայն ավելի գեղեցիկ ու տպավորիչ չէ, որ դարձնում են: Թևավոր խոսքերն արտաքուստ կարող են ունենալ լիարժեք լեզվական արտահայտություն, սակայն խորքային մակարդակում թաքցնում են շատ ավելի խոր իմաստ և հնարավորություն են տալիս խոսողին իր միտքն ուղղակիորեն, բացահայտ արտահայտելու փոխարեն քողարկելու այն մեկ այլ մակերեսային մտածություն արտահայտելով, օրինակ՝ «- Ջրուցում են, արքա,- սկսեց նա հատակին նայելով,- որ նա բնավ չի համաձայնի իր բերդերը զիջանել քեզ, վասնզի, ասել է, թե դրանցով է պահպանում իր մեծ կալվածները և նախարարի իր դիրքը ազդեցիկ: Ապա ասել է նաև,- և

13 Տե՛ս Гергиев О., նշվ. աշխ., էջ 137:



սա պատմել է ականջալուր մարդ,- թե **«խենթը միայն իր սուրը կնվիրի հակառակորդին»**» (Ստ. Զորյան, Հայոց բերդը, Եր., 1959, էջ 102). այս խոսքերով Ներսեհ Կամսարականը, արքային համարելով հակառակորդ, արտահայտում է իր բացասական պատասխանը, որ չի հանձնի բերդերը նրան, որոնցով ապահովում է իր պաշտպանությունը, դիրքը, քանի որ խենթ, հիմար չէ: Կամ Գևորգ Մարզպետունին, ցանկանալով իմանալ, թե ինչ կարծիք ունի Վահրամ սեպուհը երկրի պաշտպանության միջոցների մասին, երբ իշխաններն անմիաբան են, և իրենք էլ գորք չունեն, դիմում է նրան, իսկ Վահրամ սեպուհը պատասխանում է. «- Էլ ուրիշ ի՞նչ ասեմ. մենք միայնակ ենք. **«մի ձեռը ծափ չի տալ»**, **«մի ծաղկով գարուն չի գալ»**» (Մուրացան, Գևորգ Մարզպետունի, Եր., 1988, էջ 195). ընդգծված խոսքերով Վահրամ սեպուհը նկատի ունի, որ միայնակ, առանց գորքի ու միաբանության հնարավոր չէ ոչինչ անել: Նույնը կարելի է ասել պատկերավոր ասույթների մասին, օրինակ՝ **«- Երկար թևեր ունեցող արլորին խուզում են**, Եսայի՛» (Ս. Խանգաղյան, նշվ. աշխ., էջ 63). Եսային վերամբարձ ձևով խոսում էր մեծ գործերի մասին, որոնք այնքան էլ հավանական, իրատեսական չէին թվում ծատուրին, որն ասվածով ուզում էր արտահայտել այն միտքը, թե մեծ մեծ խոսողներին ի վերջո ոչնչացնում են: Իզուր չէ ասվում, որ լեզուն տրված է մարդուն ոչ միայն նրա համար, որ մտքեր արտահայտի, այլև նրա համար, որ թաքցնի դրանք<sup>14</sup>:

Ներակա իմաստ կարող է արտահայտվել **համեմատության** միջոցով: Համեմատությունը կազմված է համեմատելիից, համեմատյալից և համեմատության հիմքից՝ այն հատկանիշից, որի հիման վրա կատարվում է համեմատությունը: Համեմատության հիմքը հաճախ կարող է ուղղակիորեն արտահայտված չլինել, սակայն հասկացվում է արտակայորեն արտահայտվածի հիման վրա, օրինակ՝ «...գերի թագուհին, թևերը պարզած, մի վիթխարի սև թռչունի նման **(սրընթաց)** գահավիժեց անդունդը» (Ստ. Զորյան, նշվ. աշխ., էջ 572), «Մխիթարը ոտքը դրեց մեռելի պես **(անշարժ)** ընկած մելիքի կրծքին» (Ս. Խանգաղյան, նշվ. աշխ., էջ 60), «Իսկ եթե ոմանք փորձեցին այդ մասին բարձրաձայնել՝ այնպես շշպոեցին, որ ստիպված կրիայի պես **(վախեցած)** գլուխները թաքցրին պատյանի տակ»

14 Տե՛ս Багдасарян В. X., նշվ. աշխ., էջ 56:

(«Փաստ», N 100 (1112), էջ 5), «Գողի նման (**գաղտագողի**) մոտեցավ»:

Համեմատությունը սովորաբար ձևավորվում է հատուկ բառային միջոցներով՝ **նման, պես, գերդ, կարծես** և այլն, սակայն շատ դեպքերում կարող է ստեղծվել նաև առանց դրանց: Նման համեմատություններում, որ կոչվում են **թաքնված**, դիտվում է ներակայման ավելի բարձր աստիճան, քանի որ ներակայորեն են արտահայտվում և՛ համեմատության հիմքը, և՛ համեմատություն ստեղծող բառային միջոցը, օրինակ՝ «Ժողովուրդը մի հեղեղ է, որ թե զորացավ, կարող է թումբեր կործանել, ամբարտակներ տապալել» (Մուրացան, նշվ. աշխ., էջ 262), որում ներակայված են **նման//պես** համեմատական կապը և հեղեղի ծավալային ուժգնության հատկանիշը: Նույնը կարելի է ասել նաև ժխտական համեմատությունների մասին, ինչպես՝ «Ասեղ չի պատվիրակը, որ խրես փափախիդ մորթումեջ ու տանես» (Ս. Խանգաղյան, նշվ. աշխ., էջ 145), «– Այս ամբողջ փշրվող ընկույզ չէ» (նույն տեղում, էջ 73), «Մենք հո՞ ռոբոտ չենք», որոնցից առաջինում ներակայված են **նման//պես** կապը և ասեղի **շատ փոքր, աննշան (անտեսանելի)** լինելու հատկանիշը (պատվիրակը ասեղի նման փոքր, աննշան չէ...), երկրորդում՝ կապը և փշրվող ընկույզի **թույլ, փոքր, չնչին բան** լինելու հատկանիշը, երրորդում՝ կապը և ռոբոտի **անզգա լինելու, անդադար, առանց հանգստանալու աշխատելու** հատկանիշները:

Ներակայման էլ ավելի բարձր աստիճան է դիտվում այն համեմատություններում, որոնցում ներակայորեն է փոխանցվում ոչ միայն առարկայական–տրամաբանական տեղեկությունը, այլև հեղինակի կամ խոսողի գնահատողական վերաբերմունքը, օրինակ՝ «Այս ամենը մի պարզ բանի հետևանք է՝ Հայաստանում իշխանություն չլինելու: **Անշուն գյուղ ենք՝ ով մտնում՝ անփետ ման է գալիս**» («Հրապարակ», 2022, N 166 (3393), էջ 5), որտեղ ներակայորեն հաղորդվում է այն, որ «պաշտպան չունենք, այդ պատճառով ով գալիս է, առանց վախենալու ինչ ուզում, անում է», ինչպես և խոսքերի հեղինակի ընդգծված հեգնական–բացասական վերաբերմունքը, որը դրսևորվում է **իշխանություն՝ պաշտպան չունեցող երկիր** — **անշուն գյուղ** համեմատության միջոցով: Կամ՝ «Ավագանու ընտրությունները վերածվել են կրկեսի՝ թեկնածուներից մեկը երգում է,

մյուսը Արարատ լեռն է ազատագրում, իսկ երրորդը քարացած, միատոն դեմքի արտահայտությամբ կանաչ թիթեռներ է տեղադրում» («Չորրորդ իշխանություն», Եր., 2017, N 780 (1669), էջ 3)։ ընտրություններն իրենց **անկազմակերպ լինելու** հատկանիշով համեմատելով կրկեսի հետ՝ հեղինակը փոխանցում է այն միտքը, որ «թեկնածուներն իրականում ոչինչ չեն անում, միայն սին, անիրատեսական խոստումներ են տալիս, արժեք չունեցող, նույնիսկ հեզնանքի արժանի քայլեր են կատարում և այլն, ինչի հետևանքով ընտրությունները վերածվել են խեղկատակության՝ կրկեսի»։ Նկատենք, որ ինչպես փոփոխության ենթարկված դարձվածքները, հեզնանքը, նման բնույթի ծավալուն համեմատությունները ևս՝ որպես որոշակի մտքի ներակայիչներ, առավել տարածված են ԶԼՄ-ներում՝ պայմանավորված դրանց ներգործման և ընթերցողների շրջանում որոշակի կարծիք ձևավորելու գործառույթով։

Ինչպես նշել ենք, նաև պատկերավորման միջոցների գործածությամբ է պայմանավորված ներակայման տարբեր դերը տարբեր ոճերում։ Թեև նշվում է, որ դրանց գործածությունը գիտական ոճին հատուկ չէ, սակայն առանձին ենթաոճերում, օրինակ՝ գիտահանրամատչելի երկերում, գրականագիտական, պատմագիտական, արվեստաբանական բնագրերում կամ դասագրքերում, հնարավոր են պատկերավորության որոշակի դրսևորումներ, ընդ որում, ամենատարածված միջոցները փոխաբերությունը և համեմատությունն են։ Սակայն դրանք՝ իբրև ներակայիչներ, գիտական ոճում ավելի սահմանափակ դրսևորումներ ունեն, մասնավորապես ներակայում են որոշակի տեղեկություն, սակայն հիմնականում առանց ներակա գնահատականի արտահայտման, օրինակ՝ «Այդպես է նաև մարդկանց աշխարհը։ Նրանցից ամեն մեկը մի առանձին մոլորակ է, մի ինքնուրույն տիեզերական մարմին, և ամեն մեկը ձգտում է աշխարհը, դեպի հարազատ հոգին...» («Հայ գրականություն», 10-րդ դասարան, Եր., 2000, էջ 41), այսինքն՝ մարդիկ համեմատվում են մոլորակների, տիեզերական մարմինների հետ **իրարից հեռու, անկախ, մեկուսացած լինելու** հատկանիշով, որը և համեմատություն ձևավորող բառային միջոցն ընկալվում են ներակայորեն։ Կամ՝ «Խրիմյան Հայրիկը Բեռլինի վեհաժողովը պատկերավոր կերպով նմանեցրեց հարիսայի ճաշկերույթի, որին երկաթե շերեփներով ներկա-

յացած մասնակիցները կարողանում էին տանել իրենց բաժինը: Բայց քանի որ ինքը միայն թղթե շերեփ ուներ, որը մնում էր հարիսայի մեջ, ստիպված էր վերադառնալ ձեռնունայն» («Հայոց պատմություն», 11-րդ դասարան, Եր., 2015, էջ 54), որտեղ ներակայորեն այն միտքն է հաղորդվում, որ «միայն ուժ՝ երկաթե շերեփ ունեցողը կարող էր վեհաժողովում արդյունքի հասնել, իր շահաբաժինն ունենալ, իսկ զուտ թղթի վրա արձանագրված պահանջները, փաստերը, որ նման են թղթե շերեփի, ոչ մի արժեք չունեն»:

Ներակա իմաստ արտահայտող ինքնատիպ միջոց են **մեղմասությունները**, որոնք չեզոք գունավորմամբ բառեր կամ արտահայտություններ են, որ գործածվում են այնպիսի բառերի կամ արտահայտությունների փոխարեն, որոնք, ըստ խոսողի կամ հեղինակի, կոպիտ են, տհաճ կամ անտեղի: Մեղմասությունների միջոցով անուղղակիորեն անվանելով երևույթները, իրողությունները կամ հատկանիշները՝ «տեքստում ստեղծվում է իմաստային երկու շերտ՝ ուղղակի նշանակությունների մակարդակ և փոխարինված, չանվանված նշանակությունների մակարդակ: Եթե ընթերցողը հասկանա, թե ինչի մասին է խոսքն իրականում, որը փոխարինվել է մեղմասությամբ, կկարողանա հասկանալ ներակա իմաստը»<sup>15</sup>: Առանձնացվում է մեղմասությունների կիրառման 3 հիմնական նպատակ՝ 1. խուսափել հաղորդակցական բախումներից և անհաջողություններից, չստեղծել խոսակցի մոտ անհարմարության զգացում, 2. քողարկել հարցի էությունը, 3. ինչ-որ բան հաղորդել հասցեատիրոջը այնպես, որ դա հասկանալի լինի միայն նրան<sup>16</sup>: Օրինակներ՝ «ՀՀ ԱԱՏՄ-ն **վաստակած հանգստի է ճանապարհել աշխատակիցներին**» (<https://www.hlib.am/>). փոխանակ ասելու՝ «**թոշակի է ուղարկել**», «Չնայած ՀՀ-Ադրբեջան բանակցային գործընթացի դրական արդյունքներին՝ Կովկասում **լարվածությունը պահպանվում է**» (<https://www.aravot.am/>, 16.05.2022). նկատի է առնվում, որ «**հրադադարի խախտումները, գինված բախումները շարունակվում են**» և այլն:

15 Барышева А. И., Эвфемизмы как средство создания имплицитности в публицистическом тексте, [https://clar.urfu.ru/bitstream/10995/25308/1/avfn\\_2013\\_29.pdf](https://clar.urfu.ru/bitstream/10995/25308/1/avfn_2013_29.pdf) (մուտք՝ 05.08.2022).

16 Ст'ю Крисиан Л. П., Эвфемизмы в современной русской речи, «Русистика», Берлин, 1994, N 1-2, Крисиан - Эвфемизмы в современной русской речи (philology.ru) (մուտք՝ 05.08.2022):

Մեղմասությունների կիրառության առաջնային ոլորտը քաղաքական խոսույթն է, որում դրանք կարևորագույն դեր ունեն ներակա տեղեկություն փոխանցող միջոցների շարքում, քանի որ, պայմանավորված տարբեր հանգամանքներով, շատ հաճախ անհրաժեշտ է լինում քողարկել պետական, քաղաքական իրադարձությունների բուն էությունը:

Առարկաները, երևույթները անուղղակիորեն, այլաբանորեն անվանում են նաև **ըրջասույթները**՝ այդպիսով իսկ հանդես գալով որպես ներհմաստ պարունակող միավորներ: Դրանք արտահայտության պլանով առաջին հայացքից կարող են սովորական տպավորություն թողնել, բայց խորքային պլանում նկատի է առնվում այլ նշանակություն, այսինքն՝ այս դեպքում ևս տեքստում ստեղծվում է իմաստային երկու շերտ՝ ուղղակի նշանակությունների և փոխարինված նշանակությունների: Օրինակ՝ ամենայն հայոց բանաստեղծ – Հ. Թումանյան, Ավարայրի բլբուլ – Եղիշե և այլն:

Ներակա իմաստ է արտահայտվում նաև **փոխանունության** և **համընթանման** միջոցով, որոնց դեպքում ներհմաստը, իհարկե, ավելի նեղ ընդգրկում ունի, քան վերը նշված մյուս դեպքերում: Առաջին դեպքում լրացյալը զեղչվում է, իսկ դրա իմաստն արտահայտում է լրացումը՝ այդպիսով հանդես գալով որպես ներակայիչ: Այն ունի բազմազան դրսևորումներ, օրինակ՝ ա) պարունակողը կարող է գործածվել պարունակյալի փոխարեն. «**Պալատը** (= պալատի բնակիչները), ինչպես միշտ, ապրում էր լի կյանքով» (Ստ. Զորյան, նշվ. աշխ., էջ 217), բ) նյութը՝ դրանից պատրաստված առարկայի փոխարեն. «Եվրոպայի առաջնությանը 13 մարզիկով մասնակցած Հայաստանն այս առաջնությունում նվաճեց 1 **ոսկի** (= ոսկե մեդալ), 2 **արծաթ** (= արծաթե մեդալ) և 1 **բրոնզ** (= բրոնզե մեդալ)» (<https://www.aliqmedia.am/>, 31.05.2022), գ) գույնը՝ հագուստի փոխարեն. «Այդ քամիները դադարում էին միայն առավոտյան, և այդ պահին Փռանձեն թագուհին, ամբողջովին **սևեր** (= սև հագուստներ) հագած, առանց որևէ զարդի, դուրս էր գալիս բերդի վերին գոտու իր օթևանից...» (Ստ. Զորյան, նշվ. աշխ., էջ 513), ե) տեղանունը՝ կառավարող մարմնի, կազմակերպության փոխարեն. «**Մոսկվան** (= Ռուսաստանի Դաշնությունը) շատ լավ է հասկանում, որ **Անկարայի** (= Թուրքիայի) հավակնությունները չեն վերացել» («Ազգ», N 36 (5724), էջ 5) և այլն: Այլ օրի-

նակներ. «Մի փոքր համբերություն և հեղինակը կավարտի այս երկար **միջանկյալը** (= միջանկյալ հատվածը)» (Ստ. Զորյան, նշվ. աշխ., էջ 215), «**Գործադիրը** (= գործադիր իշխանությունը) լուռ է, **օրենսդիրը** (= օրենսդիր իշխանությունը) լուռ է» («Ազգ», N 36 (5724), էջ 8), «**«Ազգ»-ի** (= «Ազգ» շաբաթաթերթի լրագրողի) հարցազրույցը երվանդ Ազատյանի հետ» (նույն տեղում, էջ 5): Մամուլում լայն տարածում ունի հատկապես վերջին դեպքը, երբ թերթի կամ առցանց լրատվական կայքի անվանումը գործածվում է այդ թերթի կամ առցանց լրատվական կայքի լրագրողի նշանակությամբ («**«Փաստի»** հետզրույցում տնտեսագետ Սուրեն Պարսյանը նշում է...» («Փաստ», N 110 (1122), էջ 1), «Հանրահավաքի շրջանակներում **Armlur.am-ը** Ֆրանսիայի հրապարակում գրուցել է Հայաստանի Դեմոկրատական կուսակցության նախագահ Արամ Սարգսյանի հետ» (<https://armlur.am/1223486/>, 05.11.2022)):

Որպես ներիմաստի արտահայտման միջոց՝ փոխանունությունը տարբեր ոճերում տարբեր ընդգրկում ունի. լայնորեն կիրառվում է առօրյա-խոսակցական, գեղարվեստական և հրապարակախոսական ոճերում, իսկ պաշտոնական և գիտական ոճերում ավելի սահմանափակ կիրառություն ունի: Պաշտոնական ոճում, սակայն, մասնավորապես՝ պայմանագրերում, հանդիպում է փոխանունության մի յուրօրինակ դրսևորում, երբ որևէ արտահայտության փոխարեն սեղմության նպատակով գործածվում է մեկ այլ՝ համեմատաբար կարճ պայմանական արտահայտություն՝ հանդես գալով որպես ներակայիչ: Այսպես՝ աշխատանքային պայմանագրերում սովորաբար կողմերի՝ գործատուի և աշխատանքի ընդունվողի անուն-հայրանուն-ազգանուն կապակցության փոխարեն գործածվում են **գործատու** և **աշխատող** պայմանական փոխարինիչները, օրինակ՝ ««Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ **Արխիվ**)՝ ի դեմս տնօրեն (անուն, հայրանուն, ազգանուն) (այսուհետ՝ **Գործատու**), ով գործում է արխիվի կանոնադրության հիման վրա՝ մի կողմից, և (անուն, հայրանուն, ազգանուն) (այսուհետ՝ **Աշխատող**)՝ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին»: Այնուհետև պայմանագրում ընդգծվածները հանդես են գալիս փոխանվանաբար, օրինակ՝ «**Գործատուն** պարտավորվում է **աշխատողին** ապահովել սույն պայմանագրով պայմանավորված աշխատանքով, կազմակերպել նրա աշ-

խատանքը...»: Կամ՝ պայմանագրերում տարբեր բանկերի անվանումների փոխարեն գործածվում է պարզապես **բանկ**-ը, իսկ բանկի հետ պայմանագիր կնքած անձի անվան փոխարեն՝ **հաճախորդ**-ը, օրինակ՝ ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Հաճախորդների Սպասարկման Կենտրոնական Գրասենյակը (հասցեն՝ ՀՀ, 0002, Երևան, Ամիրյան 23/1) (այսուհետ՝ Բանկ), մի կողմից, և (անուն, հայրանուն, ազգանուն) (այսուհետ՝ **Հաճախորդ**), մյուս կողմից, կնքեցին պայմանագիր հետևյալի մասին»:

**Համընթացման** դեպքում էլ եզակին գործածվում է հոգնակիի, մասնավորը՝ ընդհանուրի նշանակությամբ կամ հակառակը, այլ կերպ ասած՝ քերականական կարգի մի եզրը ներակայորեն արտահայտում է հակադիր եզրի իմաստը, օրինակ՝ «Մարդու (= **մարդկանց**) արժանապատվությունն անխախտելի է» (ՀՀ Սահմանադրություն, Գլուխ 2, հոդված 23), «Եթե հիշեցնեի քեզ նախ՝ քրիստոնեի (= **քրիստոնյաների**) և ապա՝ հայ մարդու (= **մարդկանց**) սրբազան պարտքը, որ է՝ չարին չարյալ չհատուցանել և հայրենիքը կործանելու գնով անձնական վրեժխնդրությունը չհագեցնել» (Մուրացան, նշվ. աշխ., էջ 94), «Անորոշ դերբայը (= **անորոշ դերբայները**) հոլովվում է Ու հոլովմամբ»:

**Ամփոփենք:** Պատկերավորման-արտահայտչական միջոցները, լինելով խոսքն ազդեցիկ, տպավորիչ դարձնող, հարստացնող ոճական հնարանքներ, կատարում են ևս մեկ ուշագրավ գործառույթ, այն է՝ ծառայում են ներակա իմաստի արտահայտմանը՝ հնարավորություն տալով տարբեր հանգամանքներից ելնելով տեղեկատվությունը հաղորդելու անուղղակիորեն կամ երբեմն էլ քողարկելու այն: Առանձին դեպքերում դրանց միջոցով ներակայորեն կարող է դրսևորվել նաև խոսողի կամ հեղինակի վերաբերմունքը: Ավելին՝ ներակայման ավելի բարձր աստիճան է դիտվում այն դեպքերում, երբ ներակայորեն են արտահայտվում թե՛ տեղեկատվությունը, թե՛ հեղինակի գնահատականը:

**Միբանուշ Է. Կեսոյան** – հեղինակ է 4 գիտական հոդվածի: Հետաքրքրությունների շրջանակում են արդի հայերենի բառագիտությունն ու քերականությունը, արևմտահայերենը, ներիմաստի դրսևորման առանձնահատկությունները լեզվում և խոսքում:

Էլ. հասցե՝ kesoyan1996@mail.ru

## FIGURATIVE AND EXPRESSIVE MEANS AS STYLISTIC TRICKS OF EXPRESSION OF IMPLIED MEANING

Analysis under a new light

Miranush E. Kesoyan

**Key words** – implied meaning, cooperative principle, stylistic trick, figurative and expressive means, irony, metaphor, comparison, metonymy, synecdoche, periphrasis, euphemism, locution, implicit-evaluative sayings.

Figurative-expressive means in linguistics have been examined for the most part as stylistic tricks to make speech influential, impressive, and enriching. However, they perform another remarkable function too, that is, to serve expressing the implied meaning, enabling to convey information indirectly, or sometimes masking it, depending on various circumstances. This article is an attempt to examine the figurative and expressive means from that point of view.

The figurative-expressive means are means of manifestation of communicative implicatures and in some cases are connected with the maxims of communication, the violations of which serve as basis for conveying implied information. In certain cases, the attitude of the speaker or the author can be demonstrated by implicitly through them on the basis of which the implicit-evaluative sayings are distinguished. Moreover, a higher degree of implicitness is observed when both the information and the evaluation of the author are expressed by implicitly.

In terms of figurative-expressive means, the implicitness has a large participation and diverse manifestations in everyday-conversational, journalistic-publicistic and artistic styles, due to the abundance of figurative means in them, and very limited manifestations in scientific and official styles, dictated by their characteristic main features: accuracy, clarity, etc.



## ОБРАЗНО-ВЫРАЗИТЕЛЬНЫЕ СРЕДСТВА КАК СТИЛИСТИЧЕСКИЕ ПРИЕМЫ ВЫРАЖЕНИЯ ИМПЛИЦИТНОГО СМЫСЛА

Анализ в новом свете

Мирануш Э. Кесоян

**Ключевые слова** – имплицитный смысл, принцип кооперации, стилистический прием, образно-выразительные средства, ирония, метафора, сравнение, метонимия, синекдоха, перифраз, эвфемизм, идиома, имплицитно-оценочные высказывания.

Образно-выразительные средства в языкознании рассматривались по большей части как стилистические приемы, обогащающие речь, делающие ее влиятельной и впечатляющей. Однако они выполняют еще одну знаменательную функцию: служат для выражения имплицитного смысла, позволяя, в зависимости от различных обстоятельств, передавать информацию опосредованно, а иногда и маскировать ее. Данная статья является попыткой рассмотреть образно-выразительные средства с этой точки зрения.

Образно-выразительные средства являются средством выражения коммуникативной имплицатуры и в отдельных случаях связаны с коммуникативными постулатами, нарушения в которых становятся основой для сообщения имплицитной информации. В ряде случаев с помощью этих средств может быть представлено отношение говорящего или автора. На основе использования этих средств выделяются и имплицитно-оценочные высказывания. Кроме того, более высокая степень имплицитности наблюдается в тех случаях, когда имплицитно передается и информация, и авторская оценка.

Образно-выразительные средства имплицитности проявляются в различных аспектах бытового-разговорного, публицистического и художественного стилей речи, что обусловлено обилием в них изобразительных средств, а также ограничено проявляются в научном и официальном стилях, что продиктовано их характерными основными чертами: точностью, четкостью и др.

## REFERENCES

1. “Implicitnost’ v jazyke I rechi”, Otv. red. **Je. G. Boriseva, Ju. S. Martemjanov, M.**, “Jazyki ruskoj kul’tury”, 1999 (**In Russian**).
2. **Arnol’d I. V.**, Implikacija kak prijem postrojenija teksta I predmet filologičeskogo izučenija, “Voprosy jazykoznanija”, M., Izd-vo akademii nauk SSSR, 1982, N 4, s. 83-91 (**In Russian**).
3. **Avetisyan Yu., Sargsyan A. yev aylk’**, Hayots’ lezu yev khosk’i mshakuyt’, Yer., YEPH hrat., 2016 (**In Armenian**).
4. **Bagdasarjan V. X.**, Problema implicitnogo, Jer., Izd-vo AH ArmSSR, 1938 (**In Russian**).
5. **Barisheva A. I.**, Evfemizmy kak sredstvo sozdanija implicitnosti v publicističeskom tekste, [https://elar.ufru.ru/bitstream/10995/25308/1/avfn\\_2013\\_29.pdf](https://elar.ufru.ru/bitstream/10995/25308/1/avfn_2013_29.pdf) (**In Russian**).
6. **Gjorgijev O.**, Implicitno-ocenočnyj vyskazivanija v publichnoj reči, “Vestnik Volgy”. Serija A: Jazykoznanija, Volgograd, 2017, s. 136-140 (**In Russian**).
7. **Grajs G. P.**, Logika I rečevoje obsh’enije, “Novoje v zarubezhnoj lingvistike”, Vyp. 16. Lingvističeskaja pragmatika. Sbornik: Per. s razn. jaz. / Sost. I vstup. st. N. D. Arutjunovoj I Je. V. Padučevoj. Obsh’. red. Je. V. Padučevoj, M., “Progress”, 1985, s. 217-237 (**In Russian**).
8. **Jermakova Je.**, Implicitnost’ v xudozhestvennom tekste (na materiale ruskojazyčnoj I anglojazyčnoj prozy psixologičeskogo fantastičeskogo realizma), Saratov, Izd-vo Sarat. Un-ta, 2010 (**In Russian**).
9. **Krysin L. P.**, Evfemizmy v sovremennoj ruskoj reči, “Rusistika”, Berlin, 1994, N 1-2, s. 28-49, Крысин - Эвфемизмы в современной русской речи ([philology.ru](http://philology.ru)) (**In Russian**).
10. **Umerova M. V.**, Implikacija v semantičeskoj strukture teksta, <https://studylib.ru/doc/286807/implikaciya-v-semantičeskoj-strukture-teksta> (**In Russian**).
11. **Zaliznjak A. A.**, Semantika kavyček, “Trudy Mezhdunarodnogo seminara Dialog’2007 po komp’juternoj lingvistike I jejo prilozhenijam”, M., 2007, [http://www.philology.ru/linguistics2/zaliznyak\\_anna-07.htm](http://www.philology.ru/linguistics2/zaliznyak_anna-07.htm) (**In Russian**).